ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2024 թ.

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ Գ.ՍԱՆՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սանոսյան

Ի կատարումն Ձեր 29.03.2024թ. թիվ ԳՍ/15.3/10233-2024 հանձնարարականի «Ալիք Մեդիա»-ի լրագրող Հասմիկ Բալեյանի հարցմանն ի պատասխան՝ կից ներկայացնում եմ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի իրավասության սահմաններում առկա տեղեկատվությունը:

Առդիր՝ 1 ֆայլ:

03/04/2024

X

ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ

Հարգանքով՝ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

կատ. Վ.Դանիելյան
հեռ. /0322/ 2-03-91

Տեղեկատվություն

ՀՀ Լոռու մարզում առկա ջրամատակարարման խնդիրների վերաբերյալ /«Ալիք Մեդիա»-ի լրագրող Հասմիկ Բալեյանի հարցմանն ի պատասխան/

Կետ 3. 2021-2023թթ. ՀՀ Լոռու մարզում սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում Շնող և Գարգառ բնակավայրերում կառուցվել է 2 ջրամբար, որի արդյունքում տվյալ բնակավայրերի ջրի սակավության հետ կապված խնդիրները լուծվել են:

Կետ 5. 2021-2023թթ. ընթացքում ՀՀ Լոռու մարզի 38 բնակավայրերում կատարվել են ջրագծերի կառուցման, վերանորոգման և վերակառուցման աշխատանքներ: Նշված աշխատանքներն իրականացվել են սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում՝ պետության և համայնքների համաֆինանսավորմամբ:

Կետ 6. ՀՀ Լոռու մարզի Նորաշեն, Միխայլովկա, Պետրովկա, Ձյունաշող, Մեդովկա, Գետավան, Ֆիոլետովո, Մղարթ, Բազում, Դեբեդ բնակավայրերում առկա է ջրամատակարման խնդիր: Դրանցից Մղարթ, Բազում, Դեբեդ բնակավայրերում ջրամատակարարման լուծման ուղղությամբ ներկայումս իրականացվում են ծրագրեր:

Կետ 8. ՀՀ Լոռու մարզի 5 դպրոցներում առկա է ջրի խնդիր: Տվյալ դպրոցներն ընդգրկված են կառուցման կամ հիմնանորոգման ծրագրերի ցանկում:

Կետ 9. ՀՀ Լոռու մարզի մի շարք բնակավայրերում, որտեղ «Վելոիա ջուր» ՓԲ ընկերության կողմից ջրամատակարարում չի իրականացվում, ավագանու որոշմամբ մեկ անձի համար սահմանվել են սակագներ՝ 500-1000 դրամ տարեկան դրույքաչափով: